

Գրիգոր Արշակի Մինասյան

Ծնվել է 1982 թվականի նոյեմբերի 1-ին՝ Կոտայքի մարզի Աբովյան քաղաքում:

1999թ. գերազանցությամբ ավարտել է Աբովյանի թիվ 8 միջնակարգ դպրոցը:

2003թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետի բակալավրիատը:

2021թ. ընդունվել է Եվրասիա միջազգային համալսարանի մագիստրատուրա «Քրեական իրավունք և դատավարություն» մասնագիտացմամբ:

2006-2009թթ. աշխատել է ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Սյունիքի մարզի քննչական բաժնի Գորիսի քննչական բաժանմունքում՝ որպես քննիչ:

2009-2013թթ. աշխատել է ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Սյունիքի մարզի քննչական բաժնի Գորիսի քննչական բաժանմունքում՝ որպես ավագ քննիչ:

25.07.2013-05.09.2017թթ. աշխատել է Սյունիքի մարզի դատախազությունում՝ որպես դատախազ:

05.09.2017-03.12.2018թթ. աշխատել է Սյունիքի մարզի դատախազությունում՝ որպես ավագ դատախազ:

03.12.2018թ.-ից առ այսօր աշխատում է որպես Սյունիքի մարզի դատախազի տեղակալ:

2008-2012թթ. դասավանդել է Մովսես Խորենացի համալսարանի Գորիսի մասնաճյուղում:

Պարգևատրվել է ՀՀ դատախազության և ՀՀ ոստիկանության Քննչական գլխավոր վարչության հոբելյանական մեդալներով:

Ամուսնացած է, ունի 2 երեխա:



Կարեն Ցոլակի Հակոբյան

Ծնվել է 1975 թվականի փետրվարի 9-ին, ՀԽՍՀ Մարտունու շրջանի Աստղաձոր գյուղում:

1992թ. ավարտել է Աստղաձոր գյուղի միջնակարգ դպրոցը:

1993-1994թթ. պարտադիր ժամկետային զինծառայության է անցել ՀՀ զինված ուժերում:

2000թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետի բակալավրիատը:

02.04.2001-03.05.2002թթ. աշխատել է Զանգեզուրի կայազորի զինվորական դատախազությունում՝ որպես քննիչ-ստաժոր:

03.05.2002-12.06.2002թթ. աշխատել է Զանգեզուրի կայազորի զինվորական դատախազությունում՝ որպես քննիչ:

12.06.2002-10.02.2003թթ. աշխատել է Զանգեզուրի կայազորի զինվորկան դատախազությունում՝ որպես ավագ քննիչ:

10.02.2003-01.12.2007թթ. աշխատել է Սևանի կայազորի զինվորական դատախազությունում՝ որպես ավագ քննիչ:

30.11.2007-01.02.2010թթ. ծառայել է զինված ուժերի շարքերում:

02.02.2010-18.02.2015թթ. աշխատել է Սևանի կայազորի զինվորական դատախազության դատախազ:

18.02.2015թ.-ից առ այսօր աշխատում է Սևանի կայազորի զինվորական դատախազության ավագ դատախազ:

Ամուսնացած է, ունի երեք երեխա:



Գարիկ Արթուրի Աբելյան

Ծնվել է 1993 թվականի փետրվարի 23-ին Սյունիքի մարզի Գորիս քաղաքում:

2010թ.-ին գերազանցությամբ ավարտել է Գորիսի թիվ 2 դպրոցը:

2011-2013թթ. պարտադիր ժամկետային զինծառայության է անցել ՀՀ զինված ուժերում:

2016 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը, իսկ 2018 թվականին՝ Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան:

04.08.2016-12.09.2018թթ. աշխատել է ՀՀ վերաքննիչ քրեական դատարանում, որպես դատավորի օգնական:

15.10.2018-14.12.2018թթ. աշխատել է ՀՀ ԱՆ «Օրենսդրության զարգացման և իրավական հետազոտությունների կենտրոն» հիմնադրամում, որպես կարճաժամկետ փորձագետ:

18.11.2019-15.09.2020թթ աշխատել է Սյունիքի մարզի դատախազությունում՝ որպես դատախազ:

15.09.2020-11.02.2021թթ. աշխատել է Սյունիքի մարզի դատախազությունում՝ որպես ավագ դատախազ:

11.02.2021-18.03.2021թթ. աշխատել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազությունում՝ որպես դատախազ:

18.03.2021թ.-ից առ այսօր աշխատում է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազությունում, որպես ավագ դատախազ:

Ամուսնացած չէ: